ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՊՐԻԼ

20.04.2014. Սուրբ Հարության տոն

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաեւ Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը թե Հին, եւ թե Նոր Կտակարաններում համարվում է 5 տաղավար տոներից մեկը: Հիսուս Քրիստոսի խաչելությունից եւ մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինը իջեցրին խաչից եւ դրեցին վիմափոր գերեզմանի մեջ, փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը եւ Սողոմեն, գնացին գերեզման անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ բափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երեւացին երկու հրեշտակ եւ ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ» (Ղուկ. 24:5-6):

Հարության լուրը կանայք ավետում են առաքյալներին, որից հետո Հիսուսը երեւում է նրանց: Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության եւ հավատի հիմքը: «Եթե մեռելների հարություն չկա, ապա եւ Քրիստոս Հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը» (Ա Կորնթ. 15:13-14):

Սբ. Հարության տոնի նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Սբ. Պատարագ, որով սկսվում են զատկական տոնակատարությունները: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա մատուցվում Սբ. Պատարագ: Սբ. Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են Քրիստոս հարյավ ի մեռելոց ավետիսով, պատասխանում՝ Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկից սկսած հիսուն օրերը մինչեւ Հոգեգալուստ (Պենտեկոստե) Հայ Առաքելական եկեղեցում կոչվում են Հինունք կամ Հինանց շրջան՝ նվիրված Տիրոջ Հարության եւ Համբարձման խորհրդին: Այդ պատճառով ամբողջ շրջանը կոչվում է Տերունի: Համաձայն եկեղեցու կանոնների՝ բոլոր հիսուն օրերն ուտիք են, այսինքն՝ այս շրջանում չկան պահոց օրեր եւ թույլատրելի են բոլոր կերակրատեսակները:

ՕԳՆԵՆՔ ԳԻՈՐԳԻ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

30-ամյա թբիլիսցի Գիորգի Սարկիսովը սրտի շտապ փոխպատվաստման կարիք ունի: Բժիշկները դեռեւս 2012-2013 թվականներին կարդիովերտերդեֆիբրիլատորների փոխպատվաստման վիրահատությանը, համառորեն խորհուրդ էին տալիս անհապաղ, շտապ, մոտ ժամանակներում կատարել սրտի փոխպատվաստման վիրահատություն: Ներկայումս երիտասարդը, առողջական վիճակի կտրուկ վատացման պատճառով, կրկին գտնվում է հիվանդանոցում:

Մինսկի (Բելոռուս) սրտաբանական կենտրոնը պատրաստակամություն է հայտնել կատարել սրտի փոխպատվաստման վիրահատությունը: Վիրահատության համար անհրաժեշտ է 130 հազար ԱՄՆ դոլար:

Դիմում ենք խնդրանքով՝ հնարավորության սահմաններում օգնության ձեռք մեկնենք 30-ամյա Գիորգի Սարկիսովին:

Օգնության հաշվի համարն է, LB BANK N:GE95LB0115180442389003

Հեռ. 0901700604 (ցանկացած ցանցից հեռախոսազանգի արժեքը 1 լարի է)

Կոնտակտային անձը՝ Մայա Մայիսուրաձե

Հեռ. 577 21 23 21

ԱՊՐԻԼԻ 15-Ը՝ ՍԻՐՈ ՕՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՍԻՐՈ ՕՐԸ

Վրաստանում Սիրո օրվա տոնակատարությունը ժամանակին մտահղացվել է որպես Սուրբ Վալենտինի օրվա այլընտրանք, որը նշելու ավանդույթը նորանկախ պետություններ է եկել արեւմտյան երկրներից:

Ժամանակի ընթացքում տոնն աստիճանաբար ձեռք բերեց իր ավանդույթներն ու խորհրդանիշները՝ ծաղիկներ, սրտիկների տեսքով շոկոլադ, փափուկ խաղալիքներ, փուչիկներ. այդ օրը սրանք են առավել մեծ ժողովրդականություն վայելող նվերները սիրելիներին:

«ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ»

ՎՐՁՆԱՐՎԵՍՏԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ

Ապրիլի 12-ին, «Հայարտուն» կենտրոնում բացվեց՝ «Հուշարձան եղեռնի նահատակներին» խորագիրը կրող ցուցահանդես՝ նվիրված եղեռնի 99-րդ տարելիցին, որի կազմակերպիչն էր Վրաստանի հայ նկարիչների միությունը:

Պատկերասրահի՝ «Հուշարձան եղեռնի նահատակներին» խորագիրը ներառել էր Վրաստանում ապրող հայ վրձնարվեստի տարբեր սերնդի ներկայացուցիչների: Եվ ոչ միայն...

Այս ցուցահանդեսին ներկայացված էին 60-ից ավելի վիրահայ գեղանկարիչների եւ ժամանակակից վրաց կերպարվեստի ներկայացուցիչների աշխատանքներ:

- Մեր վրաց գործընկերները սիրահոժար միացան՝ հայոց պատմության եղերական էջերին նվիրված այս ցուցահանդեսին եւ, ինչպես տեսնում եք, նրանցում կա մեր պատմության ոչ միայն իմացությունը, այլեւ՝ մեզ սրտակցելու պատրաստակամությունը,- նշեց իր բացման խոսքում Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ, մանրանկարիչ Մերուժան Շահումյանը:

Ողջունելով հավաքվածներին, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը նմանատիպ միջոցառումները համարեց յուրատեսակ հուշակոթող՝ նվիրված Մեծ Եղեռնի նահատակներին:

Ցուցահանդեսի կտավների գաղափարական հենքը, հայ-վրաց արվեստագետների գործերում, կազմում էին մեր ժողովրդի պատմության ինչպես անցյալի եւ ներկայի արտացոլումները, ուր հարկ է նշել Յանա Ներսեսովայի «Քեսաբ» կտավը, որ արձագանքն է սիրիահայերի այսօր ապրած դրամայի, նույնպես եւ՝ գալիքի՝ անուրանալի լուսավոր տեսլականը:

Այդ մասին էին միանշանակ պատմում Ջիովանի Վեփխվածեի, Թամունա Սուլխանիշվիլու, Գիա Մարկոզաշվիլու, Գելա Կենճուաշվիլու, Կավալի Շանավայի, ինչպես եւ Թբիլիսիի, Նինոծմինդայի ու Ախալքալաքիի գեղանկարիչներ Մերուժան Շահումյանի, Գեւորգ Մանոյանի, Թենգիզ Միկոյանցի, Միքայել Գրիգորյանի, Գարրի Դավթյանի, Վալիկո Առաքելյանի, Մարինա Խաչատուրովայի, Արտեմ Անտոնյանի, Գայանե Մանասյանի, Եվգենյա Փարսադանովայի, Արտեմ Անտանոսյանի, Երվանդ Մարադյանի, Կարինե Սահակյանի, Լաուրա Աբրամովայի, Ալլա Անտոնյանի,Համլետ Արոյանի, Հայկազուն Ղարագուլյանի, Մայիս Կիրակոզովի, Հմայակ Գրիգորյանի, Կառլեն Կարապետյանի, Վալիկո Առաքելյանի տպավորիչ կտավները:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԾ ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ՆՈՐ ՍԱՆԴՂԱԿԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրատարակեց ազգային հավաքականների վարկանշային նոր սանդղակը:

Նոր չափորոշիչներով Վրաստանի հավաքականը կրկին ետընթաց է ունեցել եւ 303 միավորով հայտնվել 103-րդ տեղում: Հայաստանի հավաքականը, ընդհակառակը, 8 սանդղակի առաջընթաց կատարելով զբաղեցրել է 33-րդ հորիզոնականը:

Աղյուսակը շարունակում է գլխավորել Իսպանիայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերում են Գերմանիայի եւ Պորտուգալիայի թիմերը:

Առաջին տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Կոլումբիայի, Ուրուգվայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Հունաստանի հավաքականները:

Աղյուսակում Ուկրաինան 17-րդն է, Ռուսաստանը՝ 18-րդը, իսկ Ադրբեջանը՝ 85-րդը:

ՈՒՂՂՈՒՄ

Նախորդ համարի առաջնա էջում տպագրված «Պետական բուհի կարգավիճակ Սամցխե-Ջավախեթիի համալսարանին» տեղեկատվության առաջին նախադասությունը կարդալ հետեւյալ ձեւով. «Սամցխե-Ջավախեթիի համլսարանը, որը գտնվում է Ախալցիխեում, ստացել է պետական բուհի կարգավիճակ»:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 5.Գետնափոր տնակ, խրճիթ: 6.Գրող ... Սիրաս: 10.Մազերից զրկված: 12.«Տես ջրաղացը ... մոտիկ» («Գետակ»): 13.Հարմար, շահավետ: 14.Գրավել, սիրտը շահել: 19.Տիկինը Իտալիայում: 20.Հայ անվանի դերասան ... Աբրահամյան: 21.Երգչուհի Թինա ...: 24.Թբիլիսիի թիվ 131 դպրոցը նրա անունով էին անվանում: 25.Հացաբույս: 26.Հայկական սերիալ «...ը»: 27.Պար Արագած լեռան շուրջը, նրա լանջերին: 32.Մթնոլորտը կազմող գազ: 33.Ջենիֆեր ...: 34.Գյուղ Վրաստանում (Աբխազիայի տարածքում): 38.Գործերի ղեկավար: 40.Կինոռեժիսոր Հենրիկ ...: 41.Թբիլիսիում ծնված հայ կինոռեժիսոր, «Նռան գույնը» ֆիլմի հեղինակ ... Փարաջանով: 42.Տարածք, տարածություն: 43.Սպիտակ գույնը բանաստեղծորեն: 44.Անուն, փառք, պատիվ:

ՈՒՂՂԱՁԱՅԱՅ. 1.Հեշտ, ոչ դժվար: 2.Քաղաք Հայաստանում: 3.Հավաքել, ժողովել, կուտակել: 4.Բիզեի հայտնի օպերան: 7.Վատաբանող, վատը խոսող: 8.Վիրահայ գրող ... Ոսկանյան: 9.Գրավիչ, շատ գրավող, հմայիչ: 11.Վռազել: 15.Վրացական ... հող: 16.Արդարադատ, արդար, ճիշտ մտածող: 17.Հորոսկոպի ամսանշան: 18.Միշվելածե, Ջափարիձե, Դումբաձե: 22.«Վրաստան» թերթի թղթակից ... Կիլաձե: 23.Անապատային քամի: 28.Խոսքի մաս: 29.Նեցուկ, պահապան, ուժ տվող, պաշտպան: 30.Հեռու, ոչ մոտիկ: 31.Խնկո Ապեր (... Խնկոյան): 35.Վազելով, հեւիհեւ: 36.Առողջարանային քաղաք Հայաստանում: 37.Շեքսպիրի ողբերգություններից: 39.Կերպար Շիրվանզադեի «Նամուս» դրամայում:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ալյոշա: 8.Ապուր: 10.Սաստ: 11.Ավո: 13.Իսկրա: 15.Մղկտալ: 16.Կրիա: 17.Կռան: 19.Իսպառ: 23.Վիշապ օձ: 26.Լոռի: 27.Սարտր: 28.Վալոդ: 29.Ապտակ: 32.Իդեն: 33.Անամոք: 36.Գոշ: 37.Մումու: 39.Անդի: 40.Տակտ: 42.Չափ: 43.Սկալա: 44.Հարու: 45.Կետ: 46.Կոնք: 47.Կոշ:

ՈՒՂՂԱՁԱՅԱՅ. 1.Ալժիր: 2.Պոլկա: 3.Հասակ: 4.Բասմա: 5.Արատ: 6.Կրոլ: 9.Պտղնի: 12.Վաճառող: 14.Սիբիր: 18.Ճարպ: 20.Սլալոմ: 21.Պոլ: 22.Ռիդ: 23.Վարդենիկ: 24.Շտանգիստ: 25.Օհան: 30.Տաշտակ: 31.Կանկան: 34.Քուչակ: 35.Փուփուշ: 38.Մարո: 41.Ալո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445